## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հրավերի պարզաբանման մասին**

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 21-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ»**

**«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 և «Մուրացան» հիվանդանոցային համալիրների աշխատանքների կազմակերպման նպատակով բժշկական նշանակության ապրանքների և սարքավորումների** ձեռքբերման համար կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մայիսի 19-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2026 թվականի մայիսի 21-ին տրամադրված պարզաբանումները.

**Հարցադրում N 1:** Հարգելի գործընկեր, ընդունելի կլինի արդյոք 21, 22 (Թորակալ դրենաժ ստիլետով) չափաբաժինների համար մատակարարել 42-45 սմ ընդհանուր երկարության դրենաժ, մնացած պայմանների համապատասխանության դեպքում:

**Պարզաբանում N 1:** Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր կողմից ներկայացված հարցմանը՝ հայտնում ենք, որ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետի, «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 3.3 կետի դրույթներով՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը վերաբերում է մասնակցի կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը, ուստի առաջարկում ենք առաջնորդվել բացառապես հրավերով, որտեղ սահմանված են տեխնիկական բնութագրերի պահանջները:

**Հարցադրում N 2:** Հարգելի գործընկեր 76 չափաբաժնի համար խնդրում եմ պարզաբանել (Բակտերիալ-վիրուսային HEPA ֆիլտր շնչառական կոնտուրի համար). Բարձր արդյունավետության բակտերիալ-վիրուսային ֆիլտր (HMEF) օժտված ջերմախոնավափոխանակիչ ֆունկցիայով սա որ ֆիլտրի մասին է խոսքը HEPA թե HMEF:

**Պարզաբանում N 2:** Հարգելի գործընկեր, ի պատասխան Ձեր կողմից ներկայացված հարցմանը՝ հայտնում ենք, որ տեխնիկական բնութագրով պահանջվում է բակտերիալ-վիրուսային ֆիլտր շնչառական կոնտուրի համար՝ բարձր արդյունավետության ֆիլտրացիայով (ոչ պակաս քան 99.99%): Հետևաբար, ընդունելի են տարբեր տեսակի բակտերիալ-վիրուսային ֆիլտրեր, ներառյալ HEPA տեսակի ֆիլտրերը և HMEF տեսակի ֆիլտրերը, պայմանով, որ դրանք համապատասխանեն տեխնիկական բնութագրով սահմանված մնացած պահանջներին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Միքայել Ղարիբյանին**:
Հեռախոս՝ **010 301000 (438)**:
Էլեկտրոնային փոստ՝ **marketing.ysmu8@gmail.com**:

«ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով՝

**Հանձնաժողովի նախագահ՝** ________________ (ստորագրությունը) **Ա. Հակոբյան**

**Հանձնաժողովի անդամ՝** ________________ (ստորագրությունը) **Ա. Գրիգորյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** ________________ (ստորագրությունը) **Մ.Ղարիբյան**

**ЗАЯВЛЕНИЕ**

**О РАЗЪЯСНЕНИИ ПРИГЛАШЕНИЯ**

**Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии № 2 от 21 мая 2026 года и публикуется в соответствии со статьей 29 Закона РА «О закупках**

**Код процедуры: «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ»**

**С целью организации работ больничных комплексов «Гераци» №1 и «Мурацан» Фонда «Ереванский государственный медицинский университет имени Мхитара Гераци, комиссия по оценке процедуры закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ», организованный с целью приобретения товаров медицинского назначения и оборудования, ниже представляет запросы, полученные 19 мая 2026 года по приглашению с тем же кодом, и разъяснения, предоставленные по этому поводу 21 мая 2026 года:**

**Запрос N 1:** Уважаемый коллега, будет ли приемлемо по лотам 21, 22 (Дренаж торальный со стилетом) поставить дренаж общей длиной 42–45 см, при условии соответствия остальным требованиям?. :

**Пояснение N 1:** Уважаемый коллега, в ответ на Ваш запрос сообщаем, что руководствуясь положениями подпункта 22 пункта 32 Постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017 года, а также пункта 3.3 приглашения к процедуре закупок под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ», разъяснение не предоставляется, если запрос касается соответствия эквивалентности технических характеристик предлагаемых участником товаров техническим характеристикам, предусмотренным настоящим приглашением. Исходя из этого, предлагаем руководствоваться исключительно приглашением, в котором установлены требования к техническим характеристикам.

**Запрос N 2:** Уважаемый коллега, касательно лота 76 (Бактериально-вирусный HEPA фильтр для дыхательного контура) просим разъяснить следующее: "Высокоэффективный бактериально-вирусный фильтр (HMEF) с функцией теплоовлагообмена" — о каком именно фильтре идет речь, HEPA или HMEF?

**Пояснение N 1:** Уважаемый коллега, в ответ на Ваш запрос сообщаем, что согласно технической спецификации требуется бактериально-вирусный фильтр для дыхательного контура с высокой эффективностью фильтрации (не менее 99.99%). Следовательно, приемлемы различные типы бактериально-вирусных фильтров, включая фильтры типа HEPA и фильтры типа HMEF, при условии, что они соответствуют остальным требованиям, установленным технической спецификацией.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться к координатору закупок Микаелу Гарибяну.

Телефонный номер: **010 301000 (438)**:

Электронный адрес: **marketing.ysmu8@gmail.com**:

**Оценойная комиссия по процедуре закупки под кодом «ԷԱՃԱՊՁԲ-2026/16-18-ԵՊԲՀ»**

| | | |
|---|---|---|
| **Председатель комиссии:** | *(подпись)* | **А. Акобян** |
| **Член комисси:** | *(подпись)* | **А. Григорян** |
| **Секретарь комиссии:** | *(подпись)* | **М.Гарибян** |